ԵՐԵՎԱՆԸ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Դրամաշնորհային ծրագիր

Երևանի քաղաքապետարանը նախաձեռնում է **«Երևանը կանանց համար» դրամաշնորհային ծրագիրը**, որը միտված է կին արվեստագետների ստեղծագործական գործունեության խթանմանը, արվեստի և գրականության ոլորտում գործունեություն ծավալող կանանց կողմից ստեղծված գեղարվեստական/մշակութային արժեքների տարածմանը, արժևորմանը, հանրահռչակմանը, արվեստի և մշակութային կյանքի տարբեր բնագավառներում կանանց ներգրավվածության, ներկայացվածության ու հանրային ճանաչման մեծացմանը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 30 մլն ՀՀ դրամ:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՃՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

- Արվեստի կրթություն
- Գրականություն
- Գեղարվեստ
- Քանդակագործություն
- Թատերարվեստ
- Երաժշտարվեստ

1. ԱՐՎԵՍՏԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

(«ԿՐԹԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ»)

Մասնակցության պայմաններ

Ծրագրին կարող են դիմել 2023-2024 ուսումնական տարում արվեստի և մշակույթի ոլորտի մասնագիտություններով ՀՀ կամ արտասահմանյան բուհեր մագիստրոսական ծրագրով ընդունված, ՀՀ քաղաքացի հանդիսացող, իգական սեռի այն ուսանողները, որոնք ընդունվել են բուհ գերազանց (95% և բարձր) գնահատականներով (20 բալանոց համակարգի պարագայում՝ 19 միավոր և ավելի, 4 բալանոց համակարգի պարագայում՝ 3.8 և ավելի, այլ գնահատման համակարգի դեպքում՝ գործում է սույն համամասնության սկզբունքը):

Նախապատվություն

Մրցույթի արդյունքների ամփոփման ընթացքում հաշվի կառնվեն հայտատուի կողմից իրականացված հասարակական աշխատանքները, Երևան քաղաքի մշակութային կյանքում և մշակութային/կրթական նախաձեռնություններում մասնակցության փորձառությունը:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- Ընդունելությունը հավաստող փաստաթուղթ
- Նախորդող ուսումնառության ՄՈԳ տեղեկանք
- Մոտիվացիոն նամակ (մինչև 1000 բառի սահմաններում)
- Ոլորտը ներկայացնող հեղինակավոր անձանց/կազմակերպությունների կողմից տրված 2 երաշխավորագիր
- Անձնագրի պատճեն
- Կենսագրություն

Նշված փաստաթղթերը անհրաժեշտ է միակցված՝ zip տարբերակով ուղարկել y4w@yerevan.am էլ-հասցեին մինչև ս/թ հոկտեմբերի 30-ը, ժամը 24:00-ն ներառյալ՝ վերնագրի հատվածում նշելով՝ «ԿՐԹԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ»: 3-օրյա ժամկետում գրավոր կծանուցվի հայտը ստանալու մասին: Թերի ներկայացված հայտերը քննարկման ենթակա չեն: Հարցերի և պարզաբանումների համար զանգահարել՝ 011-514-197:

Արդյունքների ամփոփում

Մրցույթի արդյունքները կամփոփվեն ս/թ նոյեմբերի 10-ին:
Դրամաշնորհի առավելագույն չափը՝ 1,000,000 ՀՀ դրամ:
Բյուջեն՝ 4,000,000 ՀՀ դրամ:

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
(«ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»)

Մասնակցության պայմաններ

Ծրագրին կարող են դիմել արձակ ոճում հրապարակված/հրատարակված ստեղծագործության հեղինակ, ՀՀ քաղաքացի հանդիսացող կին գրողները, որոնք մինչև 2025 թվականը պետք է ներկայացնեն հայ անվանի կնոջ/կանանց մասին արձակ ստեղծագործություն (վեպ):

Նախապատվություն

Մրցույթի արդյունքների ամփոփման ընթացքում հաշվի կառնվեն հայտատուի կողմից իրականացված հասարակական աշխատանքները, Երևան քաղաքի մշակութային կյանքում և մշակութային/գրական նախաձեռնություններում մասնակցության փորձառությունը:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- 2 հատված՝ նախկինում հրապարակված/հրատարակված ստեղծագործություններից (յուրաքանչյուրը՝ մինչև 2000 բառ)
- Ազատ ոճի հայտ (հայտատուն ներկայացնում է, թե ինչու է ցանկանում գրել ստեղծագործությունը, ինչ խնդիրներ են արծարծվելու, ինչ ուղերձներ և գաղափարներ է պարունակում ստեղծագործությունը և այլն)
- Աշխատանքի իրականացման ժամանակացույց (հայտատուն ներկայացնում է, թե վեպի իրականացման համար անհրաժեշտ տվյալներն ինչ եղանակով է հավաքելու՝ հետազոտություն, արխիվային նյութերի ուսումնասիրություն, երբ են մեկնարկելու շարադրման կամ խմբագրման աշխատանքները և այլն)
- Նախատեսվող ստեղծագործության հակիրճ նկարագրությունը (առկայության պարագայում)
- Հրատարակչի երաշխավորությունն առ այն, որ հաղթող ճանաչված աշխատանքը 2025թ.-ին կտպագրվի առնվազն 500 օրինակով
- Ոլորտը ներկայացնող հեղինակավոր անձանց/կազմակերպությունների կողմից տրված 2 երաշխավորագիր
- Կենսագրություն
- Անձնագրի պատճեն

Նշված փաստաթղթերը անհրաժեշտ է միակցված՝ zip տարբերակով ուղարկել y4w@yerevan.am էլ-հասցեին մինչև ս/թ նոյեմբերի 15-ը, ժամը 24:00-ն ներառյալ՝ վերնագրի հատվածում նշելով՝ «ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»: 3-օրյա ժամկետում գրավոր կծանուցվի հայտը ստանալու մասին: Թերի ներկայացված հայտերը քննարկման ենթակա չեն: Հարցերի և պարզաբանումների համար զանգահարել՝ 011-514-231:

Արդյունքների ամփոփում

Մրցույթի արդյունքները կամփոփվեն ս/թ դեկտեմբերի 15-ին:
Դրամաշնորհի առավելագույն չափը՝ 2,500,000 ՀՀ դրամ:
Բյուջեն՝ 5,000,000 ՀՀ դրամ:

Յ. ԳԵՂԱՐՎԵՍՏ
(«ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ»)

Մասնակցության պայմաններ

Ծրագրին կարող են դիմել ՀՀ ռեզիդենտ համարվող այն անհատները/կազմակերպությունները, որոնք մինչև 2024 թվականը Երևանի ցուցասրահներից մեկում կիրականացնեն կին արվեստագետի/արվեստագետների կերպարվեստի (գեղանկարչություն, քանդակ, դեկորատիվ-կիրառական արվեստ) աշխատանքների առնվազն 10-օրյա ցուցադրություն:

Նախապատվություն

Մրցույթի արդյունքների ամփոփման ընթացքում հաշվի կառնվեն հայտատուի կողմից իրականացված հասարակական աշխատանքները, Երևան քաղաքի մշակութային կյանքում և մշակութային նախաձեռնություններում մասնակցության փորձառությունը, ցուցադրության պատկերագիրքը տպագրելու հանձնառության պատրաստակամությունը, երաշխավորագիր ցուցասրահի կողմից՝ համապատասխան տարածքը տրամադրելու պատրաստակամության վերաբերյալ:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- Ցուցադրության հայեցակարգ
- Ցուցադրության հեղինակների և աշխատանքների ընտրության մեթոդաբանություն/ուղեցույց
- Հանրահռչակման ծրագիր
- Նախահաշիվ
- Հայտատուի կենսագրություն/պորտֆոլիո
- Անձնագրի պատճեն/իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման փաստաթուղթ

Նշված փաստաթղթերը անհրաժեշտ է միակցված՝ zip տարբերակով ուղարկել y4w@yerevan.am էլ-հասցեին մինչև ս/թ հոկտեմբերի 30-ը, ժամը 24:00-ն ներառյալ՝ վերնագրի հատվածում նշելով՝ «ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ»: 3-օրյա ժամկետում գրավոր կծանուցվի հայտը ստանալու մասին: Թերի ներկայացված հայտերը քննարկման ենթակա չեն: Հարցերի և պարզաբանումների համար զանգահարել՝ 011-514-231:

Արդյունքների ամփոփում

Մրցույթի արդյունքները կամփոփվեն ս/թ նոյեմբերի 10-ին:
Դրամաշնորհի առավելագույն չափը՝ 3,000,000 ՀՀ դրամ
Բյուջեն՝ 3,000,000 ՀՀ դրամ

Կ. ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
(«ՔԱՂԱՔԱՅԻՆ ՔԱՆԴԱԿ»)

Մասնակցության պայմաններ

Ծրագրին կարող են դիմել ՀՀ քաղաքացիություն ունեցող կին քանդակագործները, որոնք կներկայացնեն քաղաքային քանդակի ոճով իրականացված աշխատանք՝ էսքիզային տարբերակով և մանրակերտով: Ընտրական փուլի արդյունքների ամփոփումից և հաղթող ճանաչվելուց հետո, հատկացված դրամաշնորհի շրջանակում, 2024 թվականի ընթացքում պետք է իրականացվեն քանդակի պատրաստման և տեղադրման աշխատանքները:

Նախապատվություն

Մրցույթի արդյունքների ամփոփման ընթացքում հաշվի կառնվեն հայտատուի կողմից իրականացված հասարակական աշխատանքները, Երևան քաղաքի մշակութային կյանքում և մշակութային նախաձեռնություններում մասնակցության փորձառությունը:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- Քանդակի էսքիզային նախագիծ և մանրակերտ
- Քանդակի պատրաստման և տեղադրման նախահաշիվ
- Ոլորտը ներկայացնող հեղինակավոր անձանց/կազմակերպությունների կողմից տրված երաշխավորագիր
- Հայտատուի կենսագրություն/պորտֆոլիո
- Անձնագրի պատճեն

Նշված փաստաթղթերը անհրաժեշտ է միակցված՝ zip տարբերակով ուղարկել y4w@yerevan.am էլ-հասցեին մինչև ս/թ նոյեմբերի 15-ը, ժամը 24:00-ն ներառյալ՝ վերնագրի հատվածում նշելով՝ «ՔԱՂԱՔԱՅԻՆ ՔԱՆԴԱԿ»: 3-օրյա ժամկետում գրավոր կծանուցվի հայտը ստանալու մասին: Թերի ներկայացված հայտերը քննարկման ենթակա չեն: Հարցերի և պարզաբանումների համար զանգահարել՝ 011-514-197:

Արդյունքների ամփոփում

Մրցույթի արդյունքները կամփոփվեն ս/թ դեկտեմբերի 15-ին:
Դրամաշնորհի առավելագույն չափը՝ 5,000,000 ՀՀ դրամ
Բյուջեն՝ 5,000,000 ՀՀ դրամ

5. ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏ
(«ՊԻԵՍ ԵՎ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ»)

Մասնակցության պայմաններ

Ծրագրին կարող են դիմել ՀՀ ռեզիդենտ համարվող այն անհատները/կազմակերպությունները, որոնք կներկայացնեն ժամանակակից կին թատերագրի պիես, որի բովանդակությունը կվերաբերի կանանց հիմնախնդիրների գեղարվեստական արծարծմանը: Ընտրական փուլի արդյունքների ամփոփումից և հաղթող ճանաչվելուց հետո, հատկացված դրամաշնորհի շրջանակում, 2024 թվականի ընթացքում պետք է իրականացվի պիեսի բեմադրությունը Երևան քաղաքում գործող թատերական կազմակերպություններից մեկում:

Նախապատվություն

Մրցույթի արդյունքների ամփոփման ընթացքում հաշվի կառնվեն հայտատուի կողմից իրականացված հասարակական աշխատանքները, Երևան քաղաքի մշակութային կյանքում և մշակութային/թատերական նախաձեռնություններում մասնակցության փորձառությունը: Որպես նախապատվություն՝ կդիտարկվի նաև բեմականացումը կին բեմադրիչի կողմից իրականացնելու հանձնառությունը:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- Պիեսի ամբողջական տարբերակ
- Պիեսի բովանդակության հակիրճ նկարագրությունը և թեմայի ընտրության մասին տեղեկատվություն
- Նախահաշիվ (հատկացվող միջոցների առնվազն 20%-ը պետք է նախատեսվի որպես պիեսի հեղինակի հոնորար)
- Թատերագրի կենսագրություն/պորտֆոլիո
- Բեմադրող ռեժիսորի կենսագրություն/պորտֆոլիո

- Ոլորտը ներկայացնող հեղինակավոր անձանց/կազմակերպությունների կողմից տրված 2 երաշխավորագիր
- Անձնագրի պատճեն/իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման փաստաթուղթ

Նշված փաստաթղթերը անհրաժեշտ է միակցված՝ zip տարբերակով ուղարկել y4w@yerevan.am էլ-հասցեին մինչև ս/թ նոյեմբերի 15-ը, ժամը 24:00-ն ներառյալ՝ վերնագրի հատվածում նշելով՝ «ՊԻԵՍ ԵՎ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ»: 3-օրյա ժամկետում գրավոր կծանուցվի հայտը ստանալու մասին: Թերի ներկայացված հայտերը քննարկման ենթակա չեն: Հարցերի և պարզաբանումների համար զանգահարել՝ 011-514-197:

Արդյունքների ամփոփում

Մրցույթի արդյունքները կամփոփվեն ս/թ դեկտեմբերի 15-ին:
Դրամաշնորհի առավելագույն չափը՝ 6,000,000 ՀՀ դրամ
Բյուջեն՝ 6,000,000 ՀՀ դրամ

6. ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏ

(«ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ»)

Մասնակցության պայմաններ

Ծրագրին կարող են դիմել ՀՀ քաղաքացիություն ունեցող կին կոմպոզիտորները, որոնք կներկայացնեն կամերային ժանրի ստեղծագործություն (գործիքային, վոկալ, վոկալ-գործիքային): Ընտրական փուլի արդյունքների ամփոփումից և հաղթող ճանաչվելուց հետո, հատկացված դրամաշնորհի շրջանակում, մինչև 2024 թվականը պետք է իրականացվի ստեղծագործության առաջին կատարումը Երևան քաղաքում գործող, առնվազն 300 ունկնդրի համար նախատեսված դահլիճներից մեկում:

Նախապատվություն

Մրցույթի արդյունքների ամփոփման ընթացքում հաշվի կառնվեն հայտատուի կողմից իրականացված հասարակական աշխատանքները, Երևան քաղաքի մշակութային կյանքում և մշակութային նախաձեռնություններում մասնակցության փորձառությունը:

Անհրաժեշտ փաստաթղթեր

• Ստեղծագործության պարտիտուր
• Կատարող համույթի/նվագախմբի/երգչախմբի կողմից տրված համաձայնություն
• Հայտատուի կենսագրություն/պորտֆոլիո
• Ոլորտը ներկայացնող հեղինակավոր անձանց/կազմակերպությունների կողմից տրված 2 երաշխավորագիր
• Անձնագրի պատճեն

Նշված փաստաթղթերը անհրաժեշտ է միակցված՝ zip տարբերակով ուղարկել y4w@yerevan.am էլ-հասցեին մինչև ս/թ հոկտեմբերի 30-ը, ժամը 24:00-ն ներառյալ՝ վերնագրի հատվածում նշելով՝ «ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ»: 3-օրյա ժամկետում գրավոր կծանուցվի հայտը ստանալու մասին: Թերի ներկայացված հայտերը քննարկման ենթակա չեն: Հարցերի և պարզաբանումների համար զանգահարել՝ 011-514-197:

Արդյունքների ամփոփում

Մրցույթի արդյունքները կամփոփվեն ս/թ նոյեմբերի 10-ին:
Դրամաշնորհի առավելագույն չափը՝ 4,000,000 ՀՀ դրամ
Բյուջեն՝ 4,000,000 ՀՀ դրամ:

7. ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏ
(«ԵՐԳ»)

Մասնակցության պայմաններ

Ծրագրին կարող են դիմել ՀՀ քաղաքացիություն ունեցող անհատ կին երաժիշտները (երաժշտախմբերը), որոնք կներկայացնեն մասսայական երաժշտության ժանրում գրված ստեղծագործության/ստեղծագործությունների (փոփ, ջազ, ֆյուժն, ռոք, հիփ-հոփ և այլն) ձայնասկավառակի թողարկման կամ երգի տեսահոլովակի նկարահանման հայտ: Հայտի որակավորման համար անհրաժեշտ է ներկայացնել Յութուբում առնվազն 1500 դիտում ունեցող ստեղծագործություն, որի հիման վրա կիրականացվի ընտրական փուլը: Արդյունքների ամփոփումից և հաղթող ճանաչվելուց հետո, հատկացված դրամաշնորհի շրջանակում, մինչև 2024 թվականի մարտի 8-ը պետք է իրականացվի ձայնասկավառակի/տեսահոլովակի պրեմիերան:

Նախապատվություն

Մրցույթի արդյունքների ամփոփման ընթացքում հաշվի կառնվեն հայտատուի կողմից իրականացված հասարակական աշխատանքները, Երևան քաղաքի մշակութային կյանքում և մշակութային նախաձեռնություններում մասնակցության փորձառությունը:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- Ձայնասկավառակի/տեսահոլովակի բովանդակային նկարագրություն
- Մոտիվացիոն նամակ (մինչև 1000 բառի սահմաններում)
- Ոլորտը ներկայացնող հեղինակավոր անձանց/կազմակերպությունների կողմից տրված 2 երաշխավորագիր
- Յութուբում տեղադրված ստեղծագործության հղում
- Նախահաշիվ
- Հայտատուի կենսագրություն/պորտֆոլիո
- Անձնագրի պատճեն

Նշված փաստաթղթերը անհրաժեշտ է միակցված՝ zip տարբերակով ուղարկել y4w@yerevan.am էլ-հասցեին մինչև ս/թ հոկտեմբերի 30-ը, ժամը 24:00-ն ներառյալ՝ վերնագրի հատվածում նշելով՝ «ԵՐԳ»: 3-օրյա ժամկետում գրավոր կծանուցվի հայտը ստանալու մասին: Թերի ներկայացված հայտերը քննարկման ենթակա չեն: Հարցերի և պարզաբանումների համար զանգահարել՝ 011-514-197:

Արդյունքների ամփոփում

Մրցույթի արդյունքները կամփոփվեն ս/թ նոյեմբերի 10-ին:
Դրամաշնորհի առավելագույն չափը՝ 3,000,000 ՀՀ դրամ
Բյուջեն՝ 3,000,000 ՀՀ դրամ: